ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Արցախի Առանշահիկների նախարարական, ավելի ուշ թագավորական տան հիմքի վրա ԺԲ դարի առաջին կեսին գոյացան երկու իշխանություններ՝ Ներքին Խաչենի եւ Հաթերքի[1]: Դարավերջին հիշյալ երկճյուղ իշխանությանը ավելանում է երրորդը՝ Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը[2]: Սրանով, կարծեք թե, ավարտվեց ֆեոդալական Արցախի քաղաքական համակարգի ձեւավորման բարդ ու երկարատեւ հարընթացը: ԺԲ դարի վերջին, արդեն, Արցախում գոյություն ունեին Առանշահիկների թագավորական տոհմից սերված երեք խոշոր ու հզոր իշխանություններ, դրանք էին՝ Ներքին Խաչենի (ընդգրկել է Խոխանաբերդի շրջակաները, Խաչեն եւ Կարկառ գետերի հովիտները եւ Մյուս Հաբանդի մի զգալի մասը), Վերին Խաչենի կամ Ծարի (ընդգրկել է Վաղուհասից ու Ջերմուկ-Իսթիսուից վերեւ՝ մինչեւ Սեւանա լճի արեւելյան ափերը) եւ Հաթերքի (ընդգրկել է Տրտու (Թարթառ) գետի միջին ավազանը, այժմ պահպանվող Հաթերք գյուղի շրջակայքը)[3]:

Վերջինը մարեց ԺԳ դարի սկզբին՝ 1214 թ., իշխան Վախթանգի մահով[4], իսկ Ներքին Խաչենի ու Վերին Խաչենի իշխանությունները, գոյատեւելով թաթար-մոնղոլական դժնդակ տիրապետության ժամանակներում ու նրանց հետքերով եկած գարա-գոյունլու (սեւ ոչխար) եւ աղ-գոյունլու (սպիտակ ոչխար) թուրքմեն քոչվոր ցեղերի** ասպատակությունների օրերին, պարսկական տիրապետության հաստատման սկզբից (ԺԶ դարի սկիզբ), ավելի մանրացած, կառչեցին իրենց լեռնապատնի տարբեր գավառներին՝ կոչվելով մելիքություններ: «Մելիք» եզրը արաբական «malik»-«մալիք» բառն է, որ թյուրքական արտասանությամբ հնչում է «melik»-«մելիք», որը նշանակում է «տեր, իշխան», որն իր հերթին գալիս է «mlk» «տիրել, իշխել» ընդհանուր սեմական արմատից[6]: ԺԶ դարի երկրորդ քառորդից[7]

1 **Բագրատ Ուլուբաբյան,** Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 135, 145:

2Անդ, էջ 152:

3 Անդ, էջ 45:

4**Վարդան Արեւելցի,** Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը եւ ստորանիշերով ծանոթագրությունները Գեորգ Թոռունյանի, Երեւան, 2001, էջ 188:

Ենթադրվում է, որ սրանք սեւ ոչխարների (գարա-գոյունլու) եւ սպիտակ ոչխարների (աղ-գոյունլու) ցեղախմբեր են անվանվել իրենց ունեցած տարբեր գույնի ու տեսակի ոչխարների հոտերի պատճառով, (տե՛ս **Հակոբ Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1977, էջ 350): Այս երկու ցեղախմբերը դավանում էին մահմեդականության տարբեր ճյուղեր՝ գարա-գոյունլուները շիա էին, իսկ աղ-գոյունլուները՝ սունի, (տե՛ս **Հակոբ Մանանդյան,** Երկեր, հ. Գ, էջ 380):

6 **Հրաչյա Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, հ. III, Երեւան, 1977, էջ 294:

7 **Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց,** Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 784. **И. Петрушевский,** Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв., Ленинград, 1949, с.100. **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երեւան, 1988, էջ 25. **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 215:

մինչեւ ԺԹ դարի առաջին քառորդը[8] Արցախի հայության ճակատագիրը գրեթե 300 տարի տնօրինել են հինգ մելիքությունները՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի եւ Դիզակի[9] գավառներում:

Սույն հոդվածի նպատակն է պարզաբանել այդ գավառներում մելիքների հատպատման կարգը եւ նրանց կողմից իրենց հպատակների նկատմամբ գործադրվող իրավունքների շրջանակը:

Չնայած մելիքական իշխանությունը ժառանգական բնույթ էր կրում, այդուհանդերձ իշխանության ժառանգման գործընթացը մեքենաբար չէր կատարվում: Գոյություն ուներ մելիքի հաստատման կարգ: Եւ այդ կարգում առաջին հերթին հաշվի էր առնվում ժողովրդի ձայնը. «Մելիքի իշխանությունը, թեեւ ժառանգական, առանց ժողովրդի համաձայնության չէր իրականանում»[10]: Յուրաքանչյուր մելիքացու, որ, որպես կանոն, լինում էր մելիքի ավագ որդին եւ հոր կենդանության ժամանակ կոչվում էր «մելիքզադա»[11], հոր մահից հետո նրան փոխարինելու համար նախ պետք է ստանար տվյալ գավառի ժողովրդի համախոսականը (գրավոր համաձայնությունը) այն մասին, որ նրանք համաձայն են իրենց գավառի մահացած մելիքի փոխարեն նրա որդուն տեսնել հոր պաշտոնում, այնուհետեւ մելիքացուն տվյալ համախոսականը պետք է վավերացնել տար Ղարաբաղի բեկլարբեկի ստորագրությամբ եւ նոր միայն կարող էր դիմել պարսից շահին հաստատության հրովարտակ ստանալու համար[12]: Հարկ է նշել, որ համաձայն պարսից արքունիքում ընդունված կարգի՝ մելիքացուն բեկլարբեկի ստորագրությամբ վավերացված համախոսականի հետ միաժամանակ պետք է շահին ներակայցներ նաեւ իր նախորդներին տրված շահական հրովարտակները[13] ի հավաստումն նրա, որ տվյալ պաշտոնը ժառանգաբար պատկանել է իրենց տոհմին[14]: Շահից հաստատության հրովարտակ ստանալուց հետո, մելիքացուն մինչեւ իր մահը[15] համարվում էր տվյալ գավառի օրինական մելիքը:

Եթե մահացած մելիքն անժառանգ էր, կամ նրա ավագ որդին անչափահաս էր, ապա վերոհիշյալ ճանապարհով պետք է անցներ մահացած մելիքի եղբայրներից առավել կարողն ու արժանավորը[16], իսկ վերջինիս անհնարինության դեպքում, նրա որդիներից առավել հարմարը: Իսկ եթե մահացած մելիքի ավագ որդին չափահաս էր, սակայն անհամապատասխան տվյալ պաշտոնին, ապա մելիքին փոխարինում էր իր կրտսեր, չափահաս, կարող որդին[17]: Արցախի «...ժողովուրդը, միշտ հավատարիմ իր հին ավանդություններին, չէր թույլ տալիս, որ խախտվեն մելիքական իշխանության վերաբերյալ կարգերը»[18]:

Մելիքի պաշտոնը ստանձնելու վերոբերյալ կարգը պարզորոշ վկայում է, որ ժողովրդ-

---

8 Տե՛ս **Վահան Բայբուրդյան,** Իրանի պատմություն, Երեւան, 2005, էջ 427:

9 Տե՛ս **Բաֆֆի,** Երկերի ժողովածու, հ. IX, Երեւան, 1987, էջ 418:

10 **Լեո,** Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Երեւան, 1973, էջ 17:

11 Անդ, էջ 17:

12 Անդ, էջ 17:

13 Տե՛ս **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ Զ-Է:

14 **Մեսրոպ արքեպ. Մմբատեանց,** Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 784-799:

15 **Լեո,** նշվ. աշխ., էջ 17:

16 Անդ, էջ 17-18:

17 **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** նշվ. աշխ., էջ Զ:

18 Տե՛ս անդ, էջ 18:

ավարությունը Արցախում բոլորովին մերօրյա ծնունդ չէ, այլ ունի դժնդակ հարյուրամյակների բովով անցած պատմություն: Հաշվի առնելով ասվածը՝ կարող ենք վստահաբար ասել, որ Արցախի հերոսական ժողովուրդն իր կենսագործունեության ընթացքում ձեւավորել է ժողովրդավարական սկզբունքներով իշխանության կազմավորման համար անհրաժեշտ ավանդույթներ, որոնք հաջողությամբ գործադրում է ի փառս Ի դարավերջին իր ազգային-պետական կարգավիճակի բարձրացման հեռեւանքով անշրջելիորեն Հանրապետություն հռչակված եւ ԻԱ դարում վստահ քայլերով զարգացող ու դեպի լուսավոր հավերժություն գնացող Արցախ պետության:

Եթե հոր մահից հետո նրան փոխարինած անդրանիկ որդին կոչվում էր մելիք, ապա մյուս որդիները կոչվում էին բեկ[19]: Բեկ բառն ունի մոնղոլական ծագում եւ նշանակում է իշխող, կառավարող, տիրող: Տվյալ գործառույթն իրականացնող պաշտոնյաները կրում էին շահ, խան, սուլթան, մելիք տիտղոսները: Իսկ բեկն ընդհանրական անվանում էր, որը տրվում էր բոլոր նրանց, ովքեր իշխում էին[20]: Հաճախ այն դառնում էր հատուկ անունների բաղադրիչ[21], ինչպես օրինակ Դանիել բեկ, Ջալալ բեկ, Գրիգոր բեկ եւ այլն:

Պարսկապատանում ու նրան հպատակ երկրամասերում բեկերը բաժանվում էին երկու խմբի՝ տոհմական եւ անձնական: Տոհմական էին համարվում այն բեկերը, ովքեր իրենց տիտղոսը ստանում էին ծննդյան իրավունքով, այսինքն՝ իրենց ծագմամբ[22]: Այլ խոսքով ասած, եթե հայրն իր բեկական իրավունքները ստացել էր Իրանի շահից, Թուրքիայի սուլթանից, կամ Անդրկովկասի տեղական խաներից, ապա նրա պաշտոնաթող լինելուց, կամ մահից հետո, այդ տիտղոսը մեխանիկորեն անցնում էր նրա որդիներին[23]:

Անձնական էին համարվում այն բեկերը, ովքեր, զբաղեցրած պաշտոնը կորցնելուց հետո, իրենց շնորհված տիտղոսը չէին փոխանցում ժառանգներին: Սակայն երբեմն անձնական բեկերը վերածվում էին տոհմական բեկերի, եթե, իհարկե, կարողանում էին պահպանել իրենց զբաղեցրած պաշտոնը մի քանի սերունդ[24]: Բեկի տիտղոս ունեցող անձը ստանում էր արտոնություն՝ ազատվելով բոլոր տեսակի հարկերից[25]:

Չնայած Արցախի հինգ մելիքներից յուրաքանչյուրն իր գավառում օժտված էր լայն իրավունքներով, սակայն նրանք հանդիսանում էին իրենց հանձնված գավառի տերն ու տիրականը կառավարման իմաստով: Այսինքն՝ գավառի հողերը նրա սեփականությունը, իսկ բնակիչները նրա ճորտերը չէին[26]. «...մելիքը գավառի տերն էր միայն կառավարման իմաստով, նրա տիրապետության տակ գտնվող գավառը իր սեփականությունը չէր, գավառի կառավարման իրավունքն էր պատկանում նրան եւ ոչ թե գավառը...»:

---

19 Տե՛ս **Բաֆֆի,** նշվ. աշխ., էջ 420:

20 Տե՛ս Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 420:

21 Տե՛ս **Միրզա Յուսուֆ Ներսեսով,** Ճմշարտացի պատմություն, Երեւան, 2000, էջ 150:

22 Տե՛ս Семен Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т.I, Тифлис, 1907, էջ 612:

23 Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, Москва-Ленинград, 1936, с. 428.

24 Տե՛ս **Семен Эсадзе,** ЭЯн.іЯЛ., էջ 612:

25 Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, Москва-Ленинград, 1936, с.428.

26Ֆրունզե Դաղոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», թ. 1, Երեւան, 1966, էջ 206:

Ասվածը, սակայն, չի նշանակում, թե մելիքն իր կողմից կառավարվող գավառում չէր կարող սեփական հողատարածք ունենալ: Նրան էին պատկանում իր ժառանգական հողերը, իսկ եթե դրանցից բացի նա ավելին էր ցանկանում ունենալ, ապա կարող էր գնել սեփական դրամով. «...մելիքը որպես ֆեոդալ իր մասնավոր սեփականության լիակատար տեր ու տիրականն էր թե՛ կառավարման իմաստով եւ թե՛ սեփականության, նա կարող էր այդ սեփականությունը տնօրինել այնպես, ինչպես ինքն էր ցանկանում, նա օգտագործում էր այդ սեփականությունն այնպես, ինչպես տեղական բոլոր բեկերը»: Ինչ վերաբերում է շահական հրովարտակով իրեն կառավարման հանձնված գավառի ժողովրդին, ապա նրանք ոչ թե մելիքի ճորտերն են եղել[27], այլ՝ հպատակները, որոնց մելիքը ընդամենը կառավարել է:

«Շահական հրովարտակով մելիքը հաստատվում էր նաեւ իր կալվածատիրական ժառանգական իրավունքների մեջ: Շահերը առանձին ծառայությունների համար մելիքներին գյուղեր էին ընծայում, սակայն այս գյուղերն իբրեւ սեփականություն չէին պատկանում նրանց, այլ, ինչպես առհասարակ օրենք էր եւ սովորութական իրավունքին համապատասխանող կարգ, միայն այդ գյուղերի արքունական հարկն (էր - Ս. Ղ-Ջ.) գնում նրանց օգտին...»[28]: Թեեւ մելիքացուներին պարսից շահերն էին հաստատում մելիքի պաշտոնում, եւ այս իմաստով կարելի է ենթադրել, որ իրականում շահերի լիազոր ներկայացուցիչներն էին մելիքների փոխարեն կառավարում գավառները, սակայն Արցախի մելիքները բնավ այդպես չեն եղել: Նրանք ընդամենը արքունիքին են վճարել սահմանված հարկը, իսկ մնացած բոլոր հարցերում եղել են բացարձակ ինքնիշխան: «Ինչ քաղաքներում բնակում էին պարսիկ խաներ...նոյն խաներից կախումն ունէին նոյն քաղաքի մէլիքներն: Ընաւ ենթարկուած չեն եղել այդ կանոնին Արցախի մէլիքներն, այլ բոլորովին անկախ... Մէլիքութիւնն ծնած օրից միշտ անկախ եղած են Արցախի մէլիքներն... ամեն տարի վճարած են շահերին մի որոշեալ գումար եւ միայն այս վճարով կախումն ունեցած շահերից»[29]:

Մելիքի կամքը հպատակների համար օրենք էր, նա «...Տէրեւում էր իր սեփական կամքին»[30]: Շահական հրովարտակները վկայում են, որ Արցախի մելիքներն ունեցել են անսահմանափակ իրավունքներ իրենց հպատակների նկատմամբ:

Իրենց հանձնված գավառները մելիքները կառավարել են տանուտերերի (գյուղապետերի՝ քենդխուդաների, քյոխվաների-գյուղի կառավարիչ), զգիրների (տանուտերի օգնական) եւ հարկահավաքների միջոցով, որոնց հիմնականում ընտրում էր համայնքի հասարակությունը, իսկ մելիքը հաստատում էր[31]: Իսկ երբեմն, առանց ժողովրդի ընտրության, մելիքը նրանց, պարզապես, նշանակում էր[32]:

Գյուղացիները պարտավոր են եղել հնազանդվել տանուտերերին: Այսպես, 1727թ. Խաչենի մելիք Գրիգոր Հասան-Ջալալյանը ոմն Դավթի նշանակելով Առաջաձոր գյուղի տանուտեր եւ այդ մասին հայտնելով ժողովրդին, միաժամանակ հանձնարարել է առանց տրտունջալու հնազանդվել նրան, սպառնալով պատժել բոլոր նրանց, ովքեր կփորձեն չենթ-

27 “Акты Кавказской Археографической Комиссии”, т.VII, Тифлис, 1874, с. 460.
28 **Լեո,** նշվ. աշխ., էջ 16-17:
29 **Մակար եպ. Բարխուդարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ Թ-Ժ:
30 **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 199:
31 Տես **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** նշվ. աշխ., էջ Է:
32 Տես **Երվանդ Լալայան,** Երկեր, հ. 2, Երեւան, 1988, էջ 241:

արկվել նրան: Մելիք Գրիգորի հրամանում մասնավորապես գրված է. «Մելիք Գրիգորէս հրամանք է մալում լինի ձեզ Առաջաձորա քաթիտրէք մեծ եւ փոքր ճամահաթ, ահա տեր Դաւիթն ձեր գեղիւր առաջնորդ եւ տանուտէր գարքեցինք... պիտի որ ամենեքեանդ լաւ հլու եւ հնազանդ կենաք զդորա եւ ով ոք հակառակութիւն արաւ դրա մեզ այնպիսի մարդոյն սաղ եւ թամբահ կանիմ այլ եւ զոր ինչ բան եւ մասլահաթ կա դորա չի լինի լաւ դուլուղ անէք եւ ինչ մարդ դորա խոսկէն եւ մասլիթէն դուրս բան արաւ տունն եւ ունկէ եւ գլուխ դաթարում...»[33]:

Տանուտերերը պարտավոր են եղել խաղաղեցնել ժողովրդի մեջ ծագած վեճերն ու խռովությունները, լսել մարդկանց բողոքներն ու լուծել դրանք, իսկ առավել դժվարին խնդիրների մասին հայտնել մելիքներին: Տանուտերերի, զգիրների եւ հարկահավաքների կատարած աշխատանքի վերաբերյալ ժողովրդի բողոքներն ու դժգոհությունները անձամբ քննում էին մելիքները[34]:

Մելիքն ուներ նաեւ իր աշխատակազմը, այն է՝ մեկ քարտուղար, մեկ սուրհանդակ եւ մոտ հիսուն զինյալ ծառաներ[35], որոնք, ըստ անհրաժեշտության, կատարում էին մելիքի բանավոր եւ գրավոր հրամանները[36]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մելիքները եղել են ինքնիշխան ռազմաքաղաքական ղեկավարներ՝ ենթադրելի է, որ նրանք ունեցել են իրենց իշխանության խորհրդանիշերը: Ունեցել են իշխանության ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ խորհրդանիշեր: Իշխանության ֆորմալ խորհրդանիշ ասելով հիմնականում հասկանում ենք դրոշ եւ զինանշան: Մելիքությունների մասին կցկտուր տեղեկություններ հաղորդողներից եւ համեմատաբար լիարժեք պատկերացում տվող հեղինակներից ոչ ոք չի անդրադարձել այս հարցին: Մելիքների գործունեությանը վերաբերող մինչ օրս հայտնի վավերագրերն ու աղբյուրները եւս ոչինչ չեն ասում այս մասին: Արցախի գերագահ մելիքների՝ Հասան-Ջալալյանների տոհմի օրինակով, մենք կիմանանք ընդհանրապես մելիքների ունեցած իշխանության խորհրդանիշերի մասին:

Հաշվի առնելով Գանձասարի վանքի գավթի հյուսիսային մուտքի վերեւում քանդակված ագրեսիվորեն միմյանց ընդառաջ շարժվող երկու առյուծների պատկերը՝ կարելի է ենթադրել, որ Խաչենի Հասան-Ջալալյան մելիքների զինանշանը հենց այդ պատկերն է եղել, որը դաջված է եղել նաեւ իշխանության մյուս խորհրդանիշի՝ դրոշի վրա:

Հարկ է նշել, որ բացի դրոշից ու զինանշանից մելիքներն ունեցել են իշխանության այլ խորհրդանիշեր եւս: Դրանցից է, օրինակ, կնիքը, որ կեռ թուր էր, շուրջը գրված «Քի ծռ մելիք... (անունը)»[37] (Քրիստոսի ծառա մելիք...), կամ հիմնականում 1 սմ հավասար կողմերով քառանկյուն, երբեմն էլ փոքրիկ էլիպս, որը գրության տակ դնելուց հետո անմիջապես կողքը մելիքները դնում էին վերոհիշյալ մակագրությունը: Այդ են վկայում մելիքների կողմից

33 **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 201:

34 **Մակար եպ. Բարխուդարեանց,** նշվ. աշխ., էջ Ը:

35 **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 245:

36 **Մակար եպ. Բարխուդարեանց,** նշվ. աշխ., էջ Է:

37 **Երվանդ Լալայան,** նշվ աշխ., էջ 252. **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 275:

գրված եւ կնքված բազմաթիվ վավերագրերը, որոնց մի փոքր մասը հրապարակել է Ա. Աբրահամյանը[38], մի քանիսն էլ՝ Ա. Մաղալյանը[39]:

Մելիքների իշխանության ոչ ֆորմալ խորհրդանիշեր են եղել նրանց համրիչը, թաշկինակը: Երբ, օրինակ քահանան ցանկանում էր պսակ կատարել, նա անպայման պետք է ունենար մելիքի գրավոր հրամանը: Վերջինս գրավոր հրամանի փոխարեն իր ծառաների միջոցով երբեմն ուղարկում էր իր համրիչը, կամ թաշկինակը, որը, քահանան, տեսնելով հավաստիանում էր, որ մելիքը թույլատրել է ամուսնությունը[40]:

Մելիքներն իրենց համրիչը, որպես իշխանության ոչ ֆորմալ խորհրդանիշ, երբեմն գործածում էին նաեւ այն դեպքում, երբ որեւէ մեղավորի նկատմամբ իրենց կայացրած պատժիչ վճիռը պետք է իրականացվեր: Վճիռը կայացնելուց հետո, մելիքը, բանավոր բացատրելով վճռի էությունը իր ծառաներից մեկին հրամայում էր կատարել այն: Վերջինս իր հերթին բացատրում էր դատապարտվածին եւ ի հավաստումն իր ասածի՝ ցույց էր տալիս բաց թղթի վրա դրված մելիքի կնքադրոշմը կամ համրիչը[41]:

Այժմ խոսենք մելիքների իրավունքների ու պարտականությունների մասին:

Իրենց գավառներում մելիքներն իրականացրել են լիազորություններ, որոնք դասական իմաստով բնորոշ են պետությանը: Պահպանված վավերագրերի ու աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի շարս բազում լիազորությունների նրանք ունեցել են իրավունքներ, որոնց իրականացման արդյունքում էր հնարավոր միայն իրենց հանձնված գավառները կառավարել հավուր պատշաճի, հիմնականում դրանք չորսն են եղել՝ 1. զորք պահելու իրավունք, 2. արդարադատություն իրականացնելու իրավունք, 3. հարկեր հավաքելու իրավունք, 4. հոգեւոր գործերին միջամտելու իրավունք:

1. Զորք պահելու իրավունք: Արցախի մելիքներն ունեցել են զորք պահելու իրավունք, որի զինվորները հավաքագրվում էին իրենց հպատակներից: Որոշ հեղինակներ նշել են, թե մելիքները կանոնավոր, մշտական զորք չեն ունեցել[42]:

Պետք է նկատենք, որ այս տեսակետը սխալ է: Արցախի մելիքները չէին կարող չունենալ մշտական, ռազմական պատրաստության առումով վարժեցված զորք, թերեւս մեկ պարզ պատճառով. նրանց մշտական եւ կազմակերպված զործող զինուժն է հանդիսացել արցախահայության ինքնիշխանության, անվտանգության եւ Արցախի տարածքային անձեռնմխելիության գլխավոր երաշխիքը: Նույնիսկ եթե ընդունենք, որ մելիքների ունեցած մշտական զորքը ռազմական պատրաստության տեսակետից եղել է փոքր-ինչ անվարժ, ապա նման կարծիքը կարող է տարածվել միայն մինչեւ 1714 թվականն ընկած ժամանակահատված վրա: Քանզի հիմնվելով 1714 թ. Գանձասարում Արցախի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի նախագահությամբ եւ հինգ մելիքների մասնակցությամբ գումարված գաղտնի ժողովի ընդունած կանոնախմբի ԺԲ կետի վրա՝ ըստ որի այսուհետեւ «Իւրաքանչիւր մելիք

38 **Ա. Աբրահամյան,** Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երեւան, 1953, էջ 148-257:

39 **Արտակ Մաղալյան,** Արցախի մելիքությունները եւ մելիքական տները XVII-XIX դդ., Երեւան, 2007:

40 Տե՛ս **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 252:

41 Տե՛ս անդ, էջ 245:

42 Տե՛ս **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 244. **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 202:

պարտաւորուած կը լինի պահել Վ. (3000) կանոնաւոր զօրք, փոքրաքանակ զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ»[43], կարող ենք վստահաբար ասել, որ 1714 թվականից հետո Արցախի հինգ մելիքներից յուրաքանչյուրն ունեցել է առնվազն 3000 զինվորից բաղկացած մշտական, կանոնավոր զորք:

Ասվածը լիովին բավարար համարելով՝ որպես հավելյալ հիմնավորում, նշենք, որ Ռաֆֆին իր «Խամսայի մելիքությունները» մեծարժեք աշխատության մեջ Արցախի մելիքների ունեցած զինուժի կանոնավոր լինելու մասին գրել է. «Որոշյալ օրերում, երկրագործական պարապմունքներից հետո, գյուղացի երիտասարդները զբաղվում էին զինվորական մարզություններով. նրանց վրա կարգված էին տասնապետներ, հիսնապետներ, հարյուրապետներ կրթելու համար»: Այնուհետեւ շարունակում է. «...երկրում այնպիսի ապահովություն էր տիրում, որ դեռահաս աղջիկները այգիների ծառերի տակ նստած, կար էին կարում, մնում էին այնտեղ, մինչեւ մութը պատում էր. հարսները զուգված, զարդարված դուրս էին գալիս տներից եւ աներկյուղ զբոսնում էին լեռների վրա, բոլորովին չմտածելով, թե թուրքը կամ պարսիկը կգա, կհափշտակե եւ կտանե նրանց: Երբ թշնամին հայտնվում էր, երկրի երիտասարդները զենքը ձեռքում միշտ պատրաստ էին նրան հանդիպելու համար»[44]:

Յուրաքանչյուր տուն պարտավոր է եղել մելիքի պահանջով մեկ զինվոր տալ, իսկ երբ իրավիճակն օրհասական էր դառնում զինվում էին զենք կրելու ընդունակ բոլոր մարդիկ: Զինվորն ինքն էր հայթայթում իր զենքերն ու ձին, իսկ եթե նա աղքատ էր լինում, ապա մելիքն էր տալիս: Հատկանշական է, որ մելիքները տուգանքներ էին սահմանել այն զինվորների համար, ովքեր իրենց ամրակցված զենքերին խնամքով չէին վերաբերվում: Այս առնչությամբ Ռաֆֆին Դիզակի մելիք Եսայիի մասին գրել է. «...նա տուգանք նշանակեց գյուղացիների վրա, եթե նրանց զենքերից մեկը պակաս կլիներ, կամ եթե իրանց զենքերը չէին պահպանի անխանգար դրության մեջ»[45]: Առանձին զինվորական համազգեստ չկար: Զինվորներն աշխատավարձ չէին ստանում, միայն, երբ ավար էին ձեռք բերում, ապա մելիքի բաժինը վերցնելուց հետո, մնացածն իրար մեջ բաժանում էին:

Մելիքն ինքն էր զորքի գերագույն հրամանատարը, սակայն յուրաքանչյուր խումբ ուներ իր հրամանատարը: Կախված ստորաբաժանման մեծությունից (տասնյակ, հարյուրյակ, հազարյակ), հրամանատարները համախտասխանաբար կոչվում էին օնբաշի, յուզբաշի, մինբաշի: Ստորաբաժանման հրամանատարի կոչումը ժառանգական էր, սակայն երբեմն մելիքը օնբաշու, յուզբաշու, կամ մինբաշու կոչումով պարգեւատրում էր նաեւ մարտերի ժամանակ առավել ակնառու զինվորներին[46]:

«Սպարապետներն-իւզբաշիներն ցուցակներով յայտնում էին մելիքներին զինուորների թիւը, սպանուած, վիրաւորուած եւ վախճանուած զօրականների անուանացուցակը, նորակոչների քանակութիւնը եւ ըստ այնմ պահանջում հրացան, թուր երկսայրի, գնդակ եւ վառօդ շարան: Սպարապետների օգնականներն կրթում եւ վարժեցնում էին նորեկ զինուորացուն-

43 **Ապրես Բէկնազարեանց,** Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ 212:
44 **Ռաֆֆի,** նշվ. աշխ., էջ 450:
45 Անդ, էջ 450:
46 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 244-245:

երը, որ առնէին անվրէպ նշան եւ քաջութեամբ յաղթէին պատերազմներում հակառակորդներին»[47]:

Բացի սպարապետներից զինապարտներին ցուցակագրելու պարտականություն են ունեցել նաեւ ժողովրդի կողմից ընտրված եւ մելիքի հաստատած տանուտերերն ու գգիրները, որ հաշվառում էին 25-28 տարեկան արական սեռի ներկայացուցիչներին եւ ցուցակները հանձնում մելիքներին: Զինվորագրվելուց ազատված են եղել հոգեւորականների եւ միայնակ մայրերի որդիները[48]:

1714 թ. Գանձասարում Արցախի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի նախագահությամբ եւ հինգ մելիքների մասնակցությամբ ու բազում մելիքազունների, զորավարների, եպիսկոպոսների, ավագերեցների, գյուղապետերի ներկայությամբ գումարված գաղտնի ժողովում, ի շարս բազմաթիվ հարցերի, սահմանվել է նաեւ զորքերի հրամանատարների ստորադաս-վերադաս ենթակայության կարգը: Ժողովի ընդունած կանոնահիմքի ԺԱ կետի երկրորդ մասում մասնավորապես գրված է. այսուհետեւ «Ամեն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամեն գնդապետ իւր զօրավարին եւ ամեն զօրական իւր գնդապետին եւն»[49]:

Բացի զորքից, մելիքներն իրենց մոտ մշտապես պահում էին մոտավորապես 300 հոգուց բաղկացած թիկնազոր, որոնց կերակրում եւ թոշակ էին տալիս: Մելիքական զորքը զինված էր դաշույնով, երկսայր թրով եւ հրացանով: Մելիքները կռվի գնալիս ձախ կողքից կապում էին կեռ թուր, առջեւից՝ դաշույն, ձախ ուսով ձգում էին վառոդամանը, իսկ աջով՝ փամփշտապուփը, որի մեջ շարված էին վառոդ պարունակող փամփուշտները: Մելիքին հետեւում էր հրացանակիրը, որ մելիքի համար միշտ պատրաստ պահում էր 1-3 հրացան[50]: Վառոդ պատրաստելը մելիքի արտոնությունն էր[51]:

Արցախում Պետրոս I-ի պատվիրակ Իվան Կարապետի 1725 թ. օգոստոսի 16-ին Ռուսաստանի կանցլեր Գավրիլ Գոլովկինին գրած նամակից պարզ է դառնում, որ արցախցի զինագործները նաեւ հրացաններ են պատրաստել մելիքական զորքի համար: Նամակում մասնավորապես գրված է. «Էսպէս կռվարար խալդ, որ էս դեղ կայ, ոչ ինչ դեղ չկայ Ղզըլպաշի երկրում (Պարսկաստանում - Ս. Հ-Ջ.). Էսօր ԺԲՌ (12.000) մարդ ձիաւոր ողջ չախմախով (կայծքար - Ս. Հ-Ջ.) թուֆանկ (հրացան - Ս. Հ-Ջ.), ողջ թուրով հազիր են (պատրաստ են - Ս. Հ-Ջ.): Ու առանց ձիով էլ յէնչանք, որ Աստուած ա խապար ու ողջին էլ թուֆանկ կայ: Ամէն օր Ժ (10) թուֆանկ այ շինում ու չախմախ այ շինում: Էստեղ քան ան (հանք - Ս. Հ-Ջ.) գտել արջիջի, երկաթի եւ պղնձի...»[52]:

«Իվան Կարապետի հաղորդումն արժեքավոր է հատկապես նրանով, որ հնարավոր է դառնում պարզել, թե 1725 թ. դրությամբ Արցախում, տարեկան կտրվածքով, մոտավորապես որքան կայծքարի հրացան է արտադրվել: Բազմապատկելով օրական պատրաստվող

47 **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ Ը-Թ:

48 **Արմեն Այվազյան,** Արցախի հայկական բանակի հրազենը 1720-ական թվականներին. «Լուսակն», թ. 2, Երեւան, 2010, էջ 11:

49 **Ապրես Բէկնազարեանց,** Գաղտնիք Դարաբաղի, 1886, էջ 212:

50 Տե՛ս **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 244-245, 252:

51 Անդ, էջ 245:

52 **Г. Эзов,** Сношения Петра Великого с армянским народом, , СПб, 1898, с.426; Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т.II, ч.II, Ереван, 1967, с.255.

10-ը հրացանը տարվա 365 օրով, ստանում ենք տարեկան արտադրանքի տպավորիչ ծավալը՝ 3650 հատ: Հասկանալի է, որ սա անփոփոխ թիվ չէր ու ենթակա էր տատանումների՝ բազմազան ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական եւ այլ իրողությունների ազդեցության ներքո»[53]:

1724 թ. նոյեմբերի 5-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայում Արցախից Սանկտ-Պետերբուրգ ուղարկված պատվիրակներ քահանա Անտոն Առաքելյանն ու տանուտեր Չալաբին այսպիսի տեղեկություններ էին հայտնում Արցախի բանակի սպառազինության մասին. «...Ղարաբաղի... նահանգից հավաքվել է մինչեւ 40.000 հայկական զորք, որից 30.000-ը հեծելազոր է, 10.000-ը՝ հետեւակ, որոնց գլխավորում են երկու հարյուրապետերը՝ Ավանն ու Միրզան, իսկ գերագույն հրամանատարն է Գանձասարի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Ամբողջ զորքը զինված է կայծքարի հրացաններով (ԻցջպՌ) եւ սրերով, բացի այդ հեծելազորայիններն ունեն նաեւ ատրճանակներ: Վառոդ եւ արճիճ նույնպես բավարար չափով ունեն, եւ այդ զենքը, ինչպես նաեւ վառոդն ու արճիճե գնդակները հայերն իրենք են պատրաստում, քանի որ այդպիսի հանքեր շատ ունեն»[54]:

Այս փաստաթղթում հարկ է հատուկ ուշադրություն դարձնել ռուսերեն բնագրում գործածված Իցջպ՚ (կայծքարի հրացան) բառին. «...այն նշանակում է ոչ թե պարզապես հրացան, այլ կայծքարի հրացան, որն այդ ժամանակաշրջանի ամենաարդիական հրազենն էր»[55]. «...նորագույն հրազենի արտադրության հմուտ կազմակերպումը... Արցախում... ազգային պետականության երկարատեւ բացակայության եւ օսմանյան ու պարսկական բանակների շրջափակման պայմաններում կարելի է համարել արտադրատեխնիկական իսկական սխրանք, որ հավասարապես կատարել են հայ ազատագրական շարժման ղեկավարությունն ու հայ զինագործները»[56]:

Փաստորեն, 1724-1725 թթ. դրությամբ Արցախի Հայոց Սղնախների 40.000 մարտիկներն արդեն բոլորը զինված էին ժամանակի լավագույն հրազենով՝ կայծքարի հրացաններով, ատրճանակներով ու սրերով: Որպեսզի ավելի հասկանալի լինի, թե ժամանակին ինչ ուժ է եղել դա, հարկ է նշել, որ հիշյալ թվականներից մոտավորապես 80 տարի անց՝ 1804-1805 թթ., Վրաստանի զորքը հիմնականում զինված էր հոնի մահակներով, «տասը հոգուց միայն երկուսն ունեին հրացան»[57]:

Զորքի թվաքանակը բոլոր մելիքների մոտ միեւնույնը չի եղել: Իրենց իշխանության գրեթե 300 տարվա ժամանակահատվածում մելիքների զինուժի թվաքանակը փոփոխական է եղել: Մակար Բարխուդարյանցը գրել է. «Ամեն մելիք ունէր արտօնութիւն պահել զօրք՝ ըստ թոյ հպատակաց եւ ըստ իւր նիւթական կարողութեան 2000-3000 զինուոր, մի սպարապետ-զօրավար, որ կոչուում էր իւզբաշի եւ մի փոքրաքոռ օգնական զօրավար, զորս ընտրում էին իրանք մելիքներն եւ հաստատում»[58]:

Հիմնվելով 1714 թ. Գանձասարում Արցախի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի

53 **Արմեն Այվազյան,** Արցախի հայկական բանակի հրազենը 1720-ական թվականներին. «Լուսակն», թ. 2, Երեւան, 2010, էջ 11:

54 "Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов", с. 204.

55 **Արմեն Այվազյան,** Արցախի հայկական բանակի հրազենը 1720-ական թվականներին. «Լուսակն», թ. 2, Երեւան, 2010, էջ 10:

56 Անդ, էջ 11:

57 "Акты Кавказской археографической комиссии", т.I, Тифлис, 1866, с.124.

58 **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ Է:

նախագահությամբ եւ հինգ մելիքների մասնակցությամբ գումարված հայտնի ժողովի ընդունած կանոնախմբի ԺԲ կետի վրա՝ ըստ որի այսուհետև «Իրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ. (3000) կանոնաւոր զօրք, փոքձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ»[59], կարող ենք ասել, որ եթե 1714 թվականից հետո Արցախի հինգ մելիքներից յուրաքանչյուրն ունեցել է առնվազն 3000 զինվորից բաղկացած մշտական, կանոնավոր զորք: Փաստորեն միավորվելու դեպքում նրանց ռազմական ուժը կարող էր հասնել 15.000-ի:

Հարկ է նշել, որ մելիքները մշտապես աշխատել են իրենց զինուժի թվաքանակն ավելացնելու ուղղությամբ: Այդ են վկայում պահպանված վավերագրերն ու պատմագիրների հայտնած տեղեկությունները:

ԺԷ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարի շրջանում Արցախի Կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանը (1606-1634 թթ.)[60] պարսկական բռնակալության դեմ համատեղ պայքար մղելու նպատակով 1631 թ. բանակցությունների մեջ մտնելով Վրաստանի թագավոր Թեյմուրազ Ի-ի հետ, նրան առաջարկել է Արցախի 40.000-անոց հայկական բանակի օգնությունը[61]:

Մոտավորապես հարյուր տարի անց, երբ ազգային-ազատագրական պայքարը նոր որակ ստացավ, Արցախի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Թիֆլիսից Մինաս վարդապետ Տիգրանյանին 1722 թ. օգոստոսի 18-ին գրած նամակում տեղեկացնում էր, որ Արցախի սղնախներում տեղակայված էր 40.000 զորք, իսկ առաջիկայում, երբ տեսնեն ռուսաց կայսեր ողորմածությունը եւ հուսադրումը, ապա եւս 40.000-ը կհավաքվի[62]: Այս թիվն իրական էր, քանի որ Թիֆլիսի Մինաս արքեպիսկոպոսը խոսում էր 100.000-անոց արցախյան ռազմուժի մասին[63]:

Եսայի Կաթողիկոսի՝ Արցախի զինուժի մասին հայտնած տեղեկության ճշմարտացիության օգտին են խոսում նաեւ ԺԸ-ԺԹ դդ. մի շարք ռուսական արխիվային վավերագրեր: Դրանց քննությունը ցույց է տալիս, որ 1720-ական թվականներին Արցախի բնակչությունը կազմում էր մոտավորապես 500.000 մարդ, որից 40.000-ը կազմում էին մելիքների զորքերը[64]:

Հարկ է նշել, որ 40.000-ը Արցախի մելիքների ունեցած զորքերի այն առավելագույն թվաքանակն էր, որ, երբեւէ, նրանք ունեցել են:

---

59 **Ապրես Բէկնազարեանց,** Գաղտնիք Ղարաբաղի, էջ 212:

60 Պահպանվել է Իրանի շահ Աբբաս Ի-ի 1606 թ. հրովարտակը, որով Հովհաննես Հասան-Ջալալյանը հաստատվել է Արցախի Կաթողիկոսի բարձր պաշտոնում (տե՛ս «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ», կազմեց Հակոբ Փափազյանը, պրակ II, Երեւան, 1959, էջ 84-85): Հովհաննես Հասան-Ջալալյանը վախճանվել է 1634 թ., (տե՛ս անդ, էջ 110):

61 Տե՛ս **Павел Чобанян,** О некоторыхвопросахистории Арцаха (XIII - XIX вв.).«Պատմաբանասիրական հանդես», թ. 3, Երեւան, 2002, էջ 148:

62 Տե՛ս "Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов", т. II, ч. II, Ереван, 1967, էջ 15:

63 Տե՛ս **Г. Эзов,** Сношения Петра Великого с армянским народом, , СПб, 1898, Г. 217, їз 339-340. "Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов", т. II, ч. II, Ереван, 1967, їз 19:

64 **Արմեն Այվազյան,** Ժողովրդագրական իրավիճակը Ղարաբաղում 1710-1720-ական թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», թ. 1-2, Երեւան, 2010, էջ 63. նույնի Արցախի հայկական բանակի հրազենը 1720-ական թվականներին, «Լուսակն», էջ 8:

Խամսայի մելիքներն իրենց զինուժը, չնայած ոչ նախկին չափով, սակայն, պահպանել էին նաեւ ԺԸ դարի երկրորդ կեսին, երբ Արցախում հայտնվեց քոչվոր թյուրքական ջեւանշիր ցեղի սարըջալու ճյուղի ցեղապետ Փանահն իր ցեղակիցներով: Այդ շրջանում Արցախի մելիքների ունեցած զինված ուժերի թվաքանակի մասին տեղեկանում ենք Վրաց թագավոր Հերակլ II-ի 1769 թ. հունիսի 14-ին կազմած Վրաստանին սահմանակից մարզերի նկարագրության մեջ, որտեղ մասնավորապես գրված է. «Խամսան մի փիրություն է, որի ամբողջ բնակչությունն ապրում է հայկական օրենքներով... Հայերն ունեն մեծ ամրոց, նրանց տեղանքը լեռնային է, անտառածածկ, դաշտերը արգասաբեր են: Ջիվանշիրցիներից կովի մեջ են մտնում երկու հազար հինգ հարյուր հոգի, իսկ հայերից՝ չորս հազար հինգ հարյուր... Խամսայի հայերը պատերազմելու գործում չափազանց խիզախ են...»[65]:

ԺԸ դարի 80-ական թվականներին Արցախի մելիքներից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ուներ 1000 զինվոր[66]: Ընդհանուր հաշվով, փաստորեն, նշված ժամանակաշրջանում Արցախն ուներ 5000-անոց զորաբանակ: Արցախի մելիքները զինված ուժեր են ունեցել նաեւ ԺԹ դարի 20-ական թվականներին, երբ ավարտին էր մոտենում մելիքական իշխանության ավելի քան 250 ամյա ժամանակաշրջանը:

Ամենայն Հայոց Եփրեմ Զորագեղցի Կաթողիկոսի ղեկավարած թափորի կազմում 1822 թ. Արցախում գտնվող Մեսրոպ Թաղիադյանը, խոսելով Գյուլիստան գավառ կատարած այցելության մասին, գրել է. «Գաւառն բովանդակ կալուած էր անխախտ ժառանգութեան Մէլիք Յովսեփայ Փրիդոնեան եւ եղբարց, որ կարէր հանել ըստ հարկին՝ ձիաւորս հինգ հազար ի պատերազմ, ողջ Հայս՝ արիս եւ քաջամարտիկս»[67]:

Հիմնվելով հիշյալ վկայության վրա՝ կարող ենք զգուշավոր ենթադրություն անել առ այն, որ մելիքական իշխանության ավարտի նախաշեմին Արցախի զինուժի թվաքանակը մոտավորապես հասնում էր 20-25.000-ի:

Արցախի ռազմուժի մասին խոսող բերված փաստերը անառարկելիորեն վկայում են, որ Խամսայի մելիքները կարողացել են պահպանել իրենց զինված ուժերը մինչեւ մելիքական իշխանության ժամանակաշրջանի ավարտը[68]:

2. Արդարադատություն իրականացնելու իրավունք: Արցախի գավառներում դատավարությունն իրականացվել է մելիքի եւ վերջինիս հաստատած տանուտերերի կողմից: Մելիքությունների կազմավորումից սկսած «...Խամսայի հինգ մահալների տիրակալները..., իշխելով այդ մահալներում, իրավունք ունեին, որով պատժում էին հպատակներին հանցագործությունների համար եւ պարգեւատրում նրանց կարեւոր ծառայությունների համար յուզբաշու կոչումով եւ մարդկանցով...»[69]: «Արքունուստ շնորհուած իրաւունքներով իւրաքանչիւր մէլիք բացարձակ տէր, իշխան, դատաւոր եւ իրաւարար էր իւր հպատակների համար: Այս պատճառաւ ամեն մէլիք իրաւունք ունէր պատժել, բանտարկել, ծեծել եւ

65 "Армяно-русские отношения в XVIII веке, сборник документов", т.IV, Ереван, 1990, с.94-95.
66 Տես «Դիւան հայոց պատմութեան», գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 25:
67 **Մեսրոպ Թաղիադյան,** Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երեւան, 1975, էջ 164:
68 Տես **Արտակ Մաղալյան,** Արցախի մելիքությունները եւ մելիքական տները XVII-XIX դդ., էջ 53:
69 Տես **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 200:

փուգանել գողերը, յափշտակողները եւ հասարակութեան հանգստութիւնը վրդովողները իւր հպատակներից»[70]:

Անկախ նրանից՝ կատարված հանցանքն իր բնույթով քրեական էր, թե քաղաքացիական, միեւնույն է բոլոր գործերի քննությունը գտնվում էր մելիքի վարույթում: Կար միայն մեկ տարբերություն. ծանր հանցանքները քննում էր մելիքը, իսկ թեթեւները եւ գյուղական վեճերը՝ տանուտերը: Տանուտիրոջ կայացրած վճռից դժգոհ մարդիկ կարող էին վճիռը բողոքարկել մելիքին, որի կայացրած վճիռը, սակայն, վերջնական էր եւ անբեկանելի[71]: Իսկ առավել ծանր հանցանքները, մասնավորապես՝ հայրենիքի եւ կրոնի նկատմամբ դավաճանությունը, քննում եւ դրանց նկատմամբ վճիռներ էր կայացնում աշխարհիկ եւ հոգեւոր ոլորտների բարձրագույն ներկայացուցիչներից կազմված խառը դատարանը: Այս մասին իմանում ենք 1714 թ. Գանձասարում Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի նախագահությամբ եւ հինգ մելիքների ու բազում մելիքազունների, զորավարների, եպիսկոպոսների, ավագերեցների ու գյուղապետերի մասնակցությամբ գումարված ժողովի ընդունած կանոնախմբից, որի ԺԷ կետում գրված է. «Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով»[72]: Դատավարության համար սահմանված օրենքներ կամ օրենսգիրք չկար: Դատի ժամանակ մելիքները ղեկավարվում էին սովորութային իրավունքի նորմերով եւ իրենց կամքով[73], որն օրենքի ուժ ուներ հպատակների համար, իսկ որոշ դեպքերում օգտվում էին Մխիթար Գոշի Դատաստանագրքից[74]: Արցախում դատավարական գործընթացներում Գոշի Դատաստանագրքի օգտագործման մասին Վ. Բաստամյանցը գրել է. «...աւելի դրական գործածութիւն ունեցաւ, անշուշտ, Մխիթարի Դատաստանագիրքը բուն իսկ Հայաստանում, կամ գոնեա նորա մի քանի նահանգներում, մանաւանդ Խաչէն գաւառում... շատ հաւանական է...որ Խաչենոյ երկրի իշխանները՝ Վախթանգը եւ նորա յաջորդները, ի պատիւ Մխիթարի ընդունեցին նորա Դատաստանագիրքը, եթէ ո՛չ բոլորովին, գոնեա մասամբ եւ գործադրում էին իւրեանց գաւառում...»[75]: «Իսկ Վախթանգ իշխանի մահից (1214 թ.) մինչեւ Արցախի մելիքությունների կազմավորումն ընկած դարերի ընթացքում Խաչեն գավառում իշխանությունն անընդմեջ գտնվել է նույն՝ Հասան-Ջալալյան տոհմի ձեռքում: Ինքնին ծագում է ենթադրությունը, որ Խաչենի...Հասան-Ջալալյան մելիքները եւս կարող էին ծանոթ լինել Գոշի «Դատաստանագրքին» եւ որոշ դեպքերում կիրառել այն իրենց դատավարությունների ընթացքում: Սակայն փաստերի բացակայությունը, ինչպես նաեւ դատավարությունների բանավոր լինելը, հնարավորություն չեն տալիս վերջնական պատասխան տալ այս հարցին»[76]:

Մելիքական դատավարության համար հատուկ շենք չկար, դատավարությունն իրականացվում էր մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Լինում էին դեպք-

70 **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ Է:

71 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 245:

72 **Ապրես Բէկնազարեանց,** նշվ. աշխ., էջ 213:

73 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 245:

74 «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երեւան, 1974, էջ 17:

75 **Մխիթար Գոշ,** Դատաստանագիրք հայոց, իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 104, 178:

76 **Արտակ Մաղալյան,** նշվ. աշխ., էջ 56:

եր, երբ մելիքը դատ էր իրականացնում նաեւ փողոցում, հրապարակում: Դատավարության համար սահմանված օրեր չկային, ցանկացած օր մելիքը կարող էր դատ վարել, սակայն կիրակի օրը նախընտրելի էր համարվում, քանզի այդ օրը մարդիկ, հիմնականում աշխատանքից ազատ լինելով, գալիս էին գանգատվելու կամ բողոքարկելու տանուտերերի կայացրած վճիռները[77]:

Մելիքների կողմից իրականացված դատավարական գործընթացը բավականին պարզ բնույթ ուներ: Դատավճիռ կայացնելու համար մելիքը հայցվորից պահանջում էր, որպեսզի վերջինս իր ասածներն ապացուցի վկաներով, իսկ եթե վկաներ չէին լինում, ապա նա պետք է երդվեր: Տարածված էին երդման հիմնականում հետեւյալ ձեւերը՝ 1. եկեղեցում կամ մի սրբի առջեւ հայցվորը մի զույգ մոմ էր վառում եւ բռնելով մեղադրյալի թեւից, նրան մոտեցնում էր վառվող մոմերին, որպեսզի վերջինս այն փչելով հանգցնի: Եթե մեղադրյալը կարողանում էր հանգցնել, ապա նա համարվում էր անմեղ, 2. հայցվորը մի վառվող ածուխ էր տալիս մեղադրյալին, որպեսզի նա, վրան ջուր լցնելով, հանգցնի այն: Գործողության կատարման ընթացքում մեղադրյալը պետք է ասեր հետեւյալ խոսքերը. «Այսպես անցնիմ, թե որ արել եմ»:

Երբեմն, եթե մեղադրյալը հասարակության սոցիալական համակարգում ցածր դիրք զբաղեցնող անձ էր, նրա փոխարեն երդվում էր նրա տերը: Իսկ առհասարակ, մարդիկ բավականին դժվար էին երդվում: Արցախցիները երդման պրոցեսին վերաբերվում էին որպես սրբազան արարողության: Հազվադեպ էր պատահում, որ մեղադրյալները կեղծ երդում տային: Նրանց համար դա հավասարազոր էր սրբապղծության: Այդ պատճառով հանցանքը հանձն էին առնում, որպեսզի չերդվեն[78]:

Դատարանական իշխանությունը եւս գտնվում էր մելիքի ձեռքում: Երբ դատավճիռն արդեն կայացված էր, տանուտերը վճռի էությունը բանավոր բացատրում էր իր զգիրին (այն դեպքում, երբ տանուտերն էր վճիռ կայացրել), իսկ մելիքն էլ՝ իր հիսուն ծառաներից մեկին, միաժամանակ հրամայելով, որպեսզի նա դատախազի հետ գնա վճիռն ի կատար ածելու: Ծառան իր հերթին էր վճիռը բացատրում դատապարտվածին եւ ի հավաստումն իր ասածի, ինչպես ասվեց, ցույց էր տալիս բաց թղթի վրա դրված մելիքի կնքադրոշմը կամ համրիչը[79]: Կախված հանցագործության բնույթից եւ իրենց կամքից, մելիքները նշանակում էին բազմազան պատիժներ: Տարածված էին պատժի հիմնականում հետեւյալ տեսակները.

1. Ծեծ - սա ամենասովորական եւ գործածական պատիժն էր: Հիմնականում ծառաներին էր հրամայվում իրականացնելու այս պատիժը, սակայն երբեմն ինքը մելիքն էր ծեծում: Շատ անգամ պառկեցնում էին եւ բարակ ճիպոտներով ծեծում: Երբեմն էլ կապում էին ծառից եւ այդպես ծեծում: Նաեւ 2-3 օր պահում էին ծառից կապված:

2. Տուգանք - սա մելիքները վերցնում էին իրենց օգտին, ինչն «...անկասկած, տեղիք էր տալիս չարաշահումների»[80]: Բավական է ասել, որ միայն տուգանքներից Վարանդայի մելիք Շահնազար II-ը ստանում էր 20 հազար ռուբլի եկամուտ[81]:

77 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 246:
78 Տես անդ, էջ 246:
79 Տես անդ, էջ 245:
80 **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 200:
81 Տես **Լեո,** նշվ. աշխ., էջ 23:

3. Բանտարկություն - հանցավորներին բանտարկում էին մելիքի ախոռում կամ տան սենյակներից մեկում:

4. Անվանարկություն - Այս պատիժը հիմնականում տրվում էր անբարոյական կանանց: Նրանց նստեցնում էին էշի վրա, պոչը ձեռքը տալիս, երեսին մուր քսում եւ պտտեցնում գյուղով: Առավել փոքր հանցավորների երեսին թրիք էին քսում:

5. Դամղա խփել - մերկացնում էին եւ հանցագործի նստատեղին խփում մելիքի կնիքը:

6. Այրումն - փլավ քամիչը շիկացնում էին կրակի մեջ եւ դնում դատապարտյալի գլխին:

7. Դահ տալ - հատուկ կախաղան չկար, սովորաբար կախում էին այս կամ այն ծառից:

8. Ձիու պոչից կապել եւ քարշ տալ - այս պատժին ենթարկվում էին անուղղելի վարքի տեր կանայք: Գյուլիստանի մելիք Հովսեփ I-ը այսպես է սպանել պոռնիկ Մարիամին[82]:

Բացի այս պատժաձեւերից, մելիքը, առավել ծանր հանցագործներին, կարող էր դատապարտել մահապատժի: Ջրաբերդի մելիք Ադամի կողմից հիշյալ պատժի իրականացման մասին հայտնի է հետեւյալ վկայությունը. «Ինքնագլուխ իշխան է, այնպես որ կարող է իրեն ենթակա ժողովրդի միջից հանցավորին, վնասակարին կամ դատապարտելիին, ով էլ որ նա լինի, ինքնակամ կերպով պատժել ու սպանել՝ առանց որեւէ մեկի հրամանի»[83]: Իսկ Պարսկաստանում առեւտրային գործունեություն ծավալած հայ գործիչներից մեկը՝ Գալուստ Շիրմազանյանը 1857 թ. ապրիլի 27-ին Կովկասի փոխարքայության հատուկ հանձնարարություններով պաշտոնյա Գեորգ Ավովերդյանին գրած նամակում Արցախի մելիքների կողմից մահապատիժ իրականացնելու կարողության մասին գրել է. «Ղարաբաղու մելիքներն ոչ մինին չէին նմանիլ..., միայն նշանակեալ հարկն կը տային եւ իրեանք իրեանց գլխու մարդ կը սպանէին, կը պատժէին...Սոցա համար Պարսկաստան երբեք ոչ կարգ եղած է եւ ոչ սահման...»[84]:

Պատմությունը պահպանել է Արցախի մելիքների կողմից մահապատժի ենթարկված մի քանի անձանց անուններ: Այսպես, Բոլնիսում գտնվող Գյուլիստանի մելիք Աբովը III-ը անհնազանդության համար ծառից կախել է Փանոսենց Հայրապետին, իսկ հովիվ Հախվերդուն, գլխին շիկացրած երկաթ դնելով, սպանել են մելիք Բեգլարի հրամանով[85]:

Դիզակ գավառի մելիքների կողմից արդարադատություն իրականացնելու, այդ թվում եւ մահապատժի դատավճիռներ կայացնելու եւ իրագործելու վերաբերյալ եւս պահպանվել են վկայություններ: Օրինակ, 1746-1781 թթ. Դիզակի մելիք Եսայիի մասին հայտնի է հետեւյալը. «Անհնարին էր զերծանելն ի ձեռաց նորա, ոչ կաշառօք եւ ոչ միջնորդական բարեխօսութեամբ. իրաքանչիւրոցն ըստ չարագործութեան հատուցանէր պատիժ եւ պատուհաս. զմահապարտսն խեղդամահ առնէր. ոմանց զմի ձեռն հատանէր եւ ոմանց զաչսն հանեալ կուրացուցանէր. արդարեւ դողայր եւ սարսէր նահանգն, որ ընդ իշխանութեամբ նորա էր. վէճ եւ կռիւ կանանց մանաւանդ բարձրաձայնելն միանգամայն վերացուցեալ էր յամեն-

82 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 246-247:

83 «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ», Երեւան, 1991, էջ 102-103:

84 **Ա. Հովհաննիսյան,** Գ. Ավովերդյանի եւ Գ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի եւ Պարսկաստանի հարաբերությունների մասին, «Պատմաբանասիրական հանդես», թ. 2, Երեւան, 1963, էջ 213-214:

85 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 246-247:

այն բնակչաց. նաեւ գողութիւն, պոռնկութիւն, մարդասպանութիւն եւ այլ ինչ չար պատահարս բոլորն ի զաւառէն ի բաց հեռացուցեալ»[86]:

Իսկ մելիք Աբասի մասին էլ հետեւյալն է հայտնի. «զդատողութիւն մեղաւորաց եւ վնասակար անձանց ամենեւին իսկ առանց արծաթասիրութեան եւ կաշառաց առնէր, զմահապարտսն զամենայն պատժէր առանց ազատութեան. կախէր զոմանս ի վերայ մեծի ճանապարհի զկախաղանէ. զոմանս հրամայէր ծառայիցն սրախողխող առնել առաջի աւագակաց եւ հասարակութեան, զի մի՛ ոք այնուհետեւ վսպահասցի գնոյն գործել չարութիւն: Արդարեւ սարսեալ դողայր գաւառն առաջի նորա»[87]:

Ի տարբերություն Արցախի մելիքների, Հայաստանի մնացած մասերի մելիքներն իրավունք չեն ունեցել կայացնելու մահվան դատավճիռ, այլ իրականացրել են վճռաբեկ ատյանի գործառույթներ: Դրանում համոզվում ենք, ընթերցելով գերմանացի ճանապարհորդ բարոն Օ. Հակստհաուզենի գրառումները. «Եթէ ոք ի շինական դատարան մտեալ եւ անբաւական ելանէր, բողոքէր սոցա. նոյնպէս ի մեծամեծ վէճս դիմէին առ սոսա. ամենայն վճիռ սոցա լինէր բերանացի. ունէին իշխանութիւն բանտարկելոյ եւ դատելոյ պատժօք, այլ ոչ ի մահ...»[88]: «Վկայակոչված փաստերը գալիս են ապացուցելու, որ Ղարաբաղում 1750-ական թթ. խանության հաստատումից հետո էլ տեղի յուրաքանչյուր մելիքությունում դատավարության իրավունքը գտնվում էր տվյալ գավառի մելիքի ձեռքում»[89]:

Ինչպես վերեւում նշել ենք, բացի քրեական բնույթի գործերից, Արցախի մելիքները քննել եւ վճիռներ են կայացրել նաեւ քաղաքացիական գործերի վերաբերյալ: Մելիքների թույլտվությամբ են կատարվել քաղաքացիական բնույթ կրող այնպիսի ակտեր, ինչպիսիք են ամուսնությունները, ամուսնալուծությունները ու որդեգրման ակտերը: Սակայն հատկանշական է, որ եթե հանցագործությունների վերաբերյալ վճիռ կայացնելու համար մելիքներն իրենց հպատակներից վարձ չէին պահանջում, ապա ամուսնության թույլտվություն տալու համար հպատակները մելիքին պետք է վճարեին 3-6 ռուսական ռուբլի: Բացի գումարից, հպատակները պարտավոր էին մելիքին վարձահատույց լինել նաեւ բնամթերքով՝ տանելով նրա համար մսացուի սուկին, երիկամունքը, 2 հատ հավ եւ 2 շիշ օղի: Եթե հարսին ուրիշ գյուղ էին տանում՝ պետք է վճարեին ավելին[90]:

Ինչ վերաբերում է ամուսնալուծություններին, ապա դրանց վերաբերյալ եւս կան պահպանված վկայություններ: Օրինակ, Գյուլիստան գավառի գյուղերից մեկի բնակիչ Մուսին, դիմելով մելիք Հովսեփ I-ին, գանգատվում է, թե իր կինն իր հետ լավ չի վարվում: Մելիքը, լսելով գյուղացու բողոքը, անմիջապես հրամայում է բաժանել ամուսիններին եւ Մուսին պսակել մեկ ուրիշ կնոջ հետ: Մելիքի ստորադրյալները, լսելով արձակված հրամանը, իսկույն կատարում են այն[91]:

Ինչպես վերեւում նշել ենք, մելիքների իրավասության ներքո են գտնվել նաեւ որդեգրմ-

86 **Առաքել Կոստանեանց,** Դիզակի մելիքությունը. «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 45:

87 Անդ, էջ 74:

88 **Արտակ Մաղալյան,** նշվ. աշխ., էջ 59:

89 Անդ, էջ 61:

90 Տես **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 243:

91 Տես անդ, էջ 241:

ան ակտերը: Այսպես, ԺԷ դարի կեսերին Գանձասարի կաթողիկոսությունում Գրիգոր Հասան-Ջալալյան Կաթողիկոսի եւ վանքի միաբանների միջև սկիզբ էր առել աթոռակալական պայքար: Միաբանները, մասնավորապես նրանց առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը, որ Խաչեն գավառի Խանձք գյուղից էր, Գրիգոր Կաթողիկոսից պահանջում էր հրաժարվել կաթողիկոսական գավազանից, պատճառաբանելով, որ Հասան-Ջալալյանները Արցախի կաթողիկոսական աթոռը վերածել են ժառանգական սեփականության: Վեճը բավական սրվում է եւ դուրս գալիս եկեղեցու շրջանակներից: Պայքարին վերջ տալու նպատակով Խաչենի մելիք Աթաբեկ Հասան-Ջալալյանի նախաձեռնությամբ կայացվում է համաձայնություն: Մելիք Աթաբեկի թույլտվությամբ Պետրոսը դառնում է Գրիգոր Կաթողիկոսի որդեգիրը, դրանով նաեւ Հասան-Ջալալյան տոհմի անդամ: Որդեգրման այս ակտով Պետրոս եպիսկոպոսը իրավունք է ստանում Գանձասարի կաթողիկոսական աթոռին փոխարինել Գրիգոր Հասան-Ջալալյանին՝ միաժամանակ պարտավորվելով իր մահից առաջ Արցախի հաջորդ Կաթողիկոս օծել բացառապես Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին[92]:

Ուսումնասիրելով մելիքական իշխանության ժամանակաշրջանի Արցախի դատավարական գործընթացը՝ կարող ենք ասել, որ քննվող ժամանակաշրջանում Արցախում դատական համակարգը եղել է եռաստիճան՝ տանուտիրական, մելիքական եւ խառն (աշխարհիկ եւ հոգեւոր), որոնցից երկրորդը վճռաբեկ ատյանի դեր էր կատարում առաջինի նկատմամբ:

Այսպիսով, մինչ օրս հայտնի փաստերի եւ աղբյուրների քննությունից կարող ենք եզրակացնել, որ Արցախի մելիքները, առաջնորդվելով հիմնականում սովորութային իրավունքով եւ մասամբ իրենց հայեցողությամբ՝ իրականացրել են դատավարություն, որը, սակայն, կարող էր բավարարել եւ բավարարել է նահապետական կացութաձեւով ապրող մարդկանց պահանջները[93]:

3. Հարկեր հավաքելու իրավունք: Արցախի մելիքներից յուրաքանչյուրը պարտավոր է եղել իր հպատակներից հավաքել պարսկական արքունիքի կողմից սահմանված հարկը եւ ժամանակին մուծել շահական գանձարանը: Եթե մելիքը շահական գանձարանին չէր վճարում տարեկան հարկը, ապա դա նշանակում էր, որ նա ապստամբել էր[94]: Շահական գանձարանին հարկ վճարելուց բացի, Արցախի գավառների բնակիչները պարտավոր էին առանձին հարկ վճարել նաեւ իրենց գավառների մելիքներին[95]: Այն կոչվում էր «...մելիքական հարկ, որը հայ գրականության մեջ հայտնի է մելիքյանա, իսկ շահական հրովարտակներում՝ ռուսում անունով»[96]: Մելիքյանա կոչվող հարկը որոշակի հարկատեսակ չէր, այլ ուներ հավաքական իմաստ: Այն «...իր մեջ ընդգրկում էր այն ամենը, ինչ բնակչությունից հավաքվում էր հօգուտ մելիքի»[97]:

Երվանդ Լալայանը նշել է այն հարկատեսակներն ու ծառայությունները, որոնք յուր-

92 Տես **Լեոնիկ Մկրտումյան,** Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երեւան, 2006, էջ 60-61:

93 Տես **Արտակ Մաղալյան,** նշվ. աշխ., էջ 63:

94 Տես **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքությունների իրավունքներն ու պարտականությունները, էջ 204:

95 Տես **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ Է-Ը:

96 **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքությունների իրավունքներն ու պարտականությունները, էջ 204:

97 Անդ, էջ 204:

աքանչյուր գավառի յուրաքանչյուր տուն պարտավոր էր վճարել եւ մատուցել իր գավառի մելիքին: Դրանք հետեւյալներն էին՝

1.Մալջեհատ - ստացված հացահատիկի 1/5 մասը,

2. սալյան - սա նույն սալյանե կոչվող տուրքն էր, որը եւս գանձվում էր հացահատիկից[98],

3. գլխահարկ կամ ոսկի - ռուսական փողով հաշված մուտ երեք ռուբլի,

4. պսակի - ամուսնության թույլտվություն տալու համար հպատակները մելիքին պետք է վճարեին 3-6 ռուսական ռուբլի: Բացի գումարից, հպատակները պարտավոր էին մելիքին վարձահատույց լինել նաեւ բնամթերքով՝ տանելով նրա համար մսացուի սուկին, երիկամունքը, 2 հատ հավ եւ 2 շիշ օղի: Եթե հարսին ուրիշ գյուղ էին տանում՝ պետք է վճարեին ավելին: Այս դեպքում մելիքը, ի շարս իր բազմաթիվ դերերի, հանդես է եկել որպես քաղաքացիական կացության ակտերը վավերացնող սուբյեկտ եւ իրականացրել է համապատասխան գործառույթ:

Բացի այս հարկերից ու պարտադիր վճարներից, հպատակները պարտավոր են եղել աշխատել մելիքի համար ու նաեւ մատուցել որոշակի ծառայություններ: Դրանք էին՝

1. Փայտ - յուրաքանչյուր տուն պարտավոր էր տարեկան մեկ իշաբեռ փայտ բերել,

2. Գյունփուլի - հնձել ու վարել մելիքի հողերը, ցանել եւ ստացված բերքը տեղափոխել մելիքի ապարանք: Սկզբնապես որոշված չի եղել, թե մելիքին պատկանող հողերում հպատակները քանի օր պետք է աշխատեն, դա պայմանավորված է եղել մելիքի կամքով, այնուհետեւ սահմանվել է 20 օր:

3. Ծառա եւ աղախին - մելիքի տանը ծառայելու համար յուրաքանչյուր 25 տուն մեկ ծառա եւ ամեն 30 տուն մեկ աղախին պետք է տար: Եթե գյուղում այդքան տուն չլիներ, միեւնույն է բնակիչները չէին ազատվում այդ պարտականությունից[99]:

Հիշյալ հարկերից ու պարտադիր աշխատանքներից ազատ էին հոգեւորականները, տանուտերերը, զգիրները, սափրիչներն ու յոթանասուն եւ ավելի տարիքի մարդիկ[100]:

4. Հոգեւոր գործերին միջամտելու իրավունք: Արցախի մելիքներն մասնակցություն են ունեցել իրենց գավառների հոգեւոր գործերին: Այսպես, Դիզակ գավառի Գտիչ վանքի առաջնորդ Մեսրոպ վարդապետի տապանաքարի արձանագրությունից հայտնի է դառնում, որ նրան եպիսկոպոս է ձեռնադրել տվել ու վանքի առաջնորդ նշանակել մելիք Եգանը. «Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոբ վարդապետին թվին ՌՃՆԲ (1723): Լուսահոգի Մելիք Եկանն ձեռնադրել տվաւ եպիսկոպոս, կարգեց Կտիչոյ վանքին առաջնորդ: Որ եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՌՃՂՋ (1747). ով որ կարդայ, մէկ բերան ողորմի ասէ»[101]:

Բացի այս կամ այն անձին հոգեւորական ձեռնադրելու կամ որեւէ եկեղեցու առաջնորդ նշանակելու վերաբերյալ հարցերում ունեցած մասնակցությունից, մելիքներն իրենց վճռական խոսքն են ասել նաեւ բարձրաստիճան հոգեւորականների կողմից իրենց գավառներն

98 Տե՛ս **Արտակ Մաղալյան,** նշվ. աշխ., էջ 70:

99 Տե՛ս **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 242-243:

100 Տե՛ս **Երվանդ Լալայան,** նշվ. աշխ., էջ 242. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ Ը:

101 **Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 202:

ուղարկված նվիրակներին աջակցելու հարցում: Այսպես, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ղուկաս Կարնեցին 1794 թ. օգոստոսի 7-ին Վարանդայի մելիք Ջումշուդին ուղղված նամակով տեղեկացնելով, որ Սուրբ Էջմիածնի օգտին հանգանակություն անելու նպատակով Շուշի է ուղարկել Նախիջևանի եւ Ղափանի նվիրակ Հովհաննես վարդապետին՝ խնդրել է նրան արժանացնել բարեհաճ ընդունելության եւ ցուցաբերել ամեն կարգի աջակցություն[102]:

Արցախի մելիքները բավականին ակտիվորեն իրենց մասնակցությունն են բերել նաեւ Արցախի կաթողիկոսների ընտրություններին: Սակայն, «Եթե ժողովրդի ստորին խավերը հանձին Կաթողիկոսի տեսնում էին սոսկ հոգեւոր առաջնորդի, ապա մելիքները աշխատում էին նրան օգտագործել իրենց ֆեոդալական նպատակների համար, ուստի եւ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր անցկացնել անպայման այն թեկնածուին, որի վրա մեծ հույսեր էր դրել»[103]:

1763 թ. փետրվարին սուր պայքար էր բորբոքվել Արցախի Կաթողիկոսի ընտրության շուրջ: Խաչենի, Վարանդայի, Դիզակի մելիքներն ու Շուշիի թաթար Իբրահիմ խանը, ցանկանալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից Արցախի Կաթողիկոս օծել տալ իրենց կողմից ընտրված Հովհաննես եպիսկոպոս Հասան-Ջալալյանին, բազմաթիվ միջնորդական բնույթ կրող նամակներ էին հղում Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Շամախեցուն, իսկ վերջինիս մահից հետո նաեւ Սիմեոն Երեւանցուն: Իսկ Գյուլիստանի, Ջրաբերդի մելիքներն ու Գանձակի Շահվերդի խանը աշխատում էին Արցախի Կաթողիկոս օծել տալ Իսրայել Ջրաբերդցուն[104], որ Արցախի Ներսես Ջրաբերդցի հակաթոռ Կաթողիկոսի եղբոր՝ Սարգիս հարյուրապետի թոռն էր[105]: Կողմերից յուրաքանչյուրն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված նամակ-միջնորդագրով սպառնում էր, որ եթե իրենց թեկնածուն չօծվի Արցախի Կաթողիկոս, ապա արյունահեղություն կլինի[106]:

1766 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Երեւանցին Վրաց թագավոր Հերակլ II-ին հղած նամակում մասնավորապես գրել է. «...արդեն երեք տարի է, որ մենք Գանձակից եւ Խամսայից վիշտ եւ գլխացավություն ենք կրում... քանզի Փանահի տղան (Շուշիի Իբրահիմ խանը - Ս. Հ-Ջ.) ու իր մելիքները... մեզ գրել են, թե մեր ընտրածին պիտի հաստատես եւ նրան պիտի տաս կաթողիկոսությունը... Գանձակի Շահվերդի խանն ու իր մելիքներն էլ գրել են, թե մեր ընտրածին պիտի հաստատես եւ նրան պիտի տաս կաթողիկոսությունը: Երկու կողմերը նաեւ գրել են, որ եթե մեր ընտրյալին չհաստատես, մեր միջեւ արյունահեղություն կլինի»[107]: Հաշտեցնելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Երեւանցու հրավերով Էջմիածին են ժամանում Հովհաննես Հասան-Ջալալյանն ու Իսրայել Ջրաբերդցին: Հանդիպման ժամանակ Սիմեոն Կաթողիկոսը հանդիմանում է երկուսին էլ՝ ասելով, որ եթե միմյանց դեմ չգործեիք, ապա այդքան հակառակություններ չէին լինի: Հատկանշական է Հովհաննես եպիսկոպոսի եւ Իսրայել Ջրաբերդցու պատասխանը Ամենայն Հայոց Հայրապետին: Դրանում պարզորոշ երեւում է, թե մելիքներն ինչպիսի մասնակցություն են ունեցել Արցախի կաթողիկոսների ընտրության եւ առհասարակ հոգեւոր ոլորտին առնչվող հարց-

102 Տե՛ս **Արտակ Մաղալյան,** նշվ. աշխ., էջ 81:
103 **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 203:
104 Տե՛ս **Լեոնիկ Մկրտումյան,** նշվ. աշխ., էջ 144-151:
105 Տե՛ս անդ, էջ 143:
106 Տե՛ս անդ, էջ 147:
107 **Ֆրունզե Պողոսյան,** Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, էջ 203:

երի լուծման գործում: Պատասխանելով Սիմեոն Կաթողիկոսին՝ նրանք ասել են. «...Մենք ի՞նչ անենք, մելիքներն ու իշխաններն են բռնությամբ այդպես արել, մենք ինչպե՞ս կարող ենք ընդդիմանալ նրանց հրամաններին... Չենք կարող դեմ գնալ աշխարհիկ իշխանությանը, քանզի եթե մենք նրանց չլսենք, ապա տանջանքների կենթարկվենք նրանց կողմից»[108]:

Գրեթե երեք տարի տեւած համառ պայքարն ավարտվում է Հովհաննես եպիսկոպոսին սատարող խմբի հաղթանակով: 1765 թ. դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Երեւանցու ձեռամբ Հովհաննես Հասան-Ջալալյանն օծվում է Արցախի Կաթողիկոս[109]: Իսկ չորս ամիս անց՝ 1766 թ. ապրիլի 10-ին, Սիմեոն Կաթողիկոսը բանադրում է Իսրայել Ջրաբերդցուն[110]:

Այսպիսով, բերված փաստերը ակնհայտորեն վկայում են, որ մելիքները, լինելով աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներ, իրենց լրջագույն մասնակցությունն են բերել հոգեւոր ոլորտի հարցերի լուծման ժամանակ՝ գործուն եւ վճռորոշ դերակատարություն ունենալով ինչպես իրենց գավառներում ծառայող հոգեւորականների նշանակման, այնպես էլ Արցախի կաթողիկոսների ընտրության գործում:

Սակայն անկախ այս իրավունքներից, մելիքի դերը մեծագույն մասամբ պայմանավորված է եղել նրա անձնական հատկանիշներով: Անճարակ աթոռակալը չի էլ վայելել շահական հրովարտակով իրեն շնորհված իրավունքները, իսկ ձեռներեց ու խելամիտ գավառապետ-մելիքը հաճախ ոչ միայն հզոր իշխանություն է ունեցել իր տիրույթներում, այլեւ գերազահություն է ձեռք բերել հարեւան մելիքությունների վրա, դարձել շահի մահմեդական կառավարիչներից անկախ ու ինքնիշխան մի կառավարիչ[111]: «Թ-ույլ ու անկարող անհատը,-նկատել է Լեոն,- չէր կարող իրագործել այն, ինչ շահերը գրում էին իրենց հրովարտակների մեջ, մինչդեռ քաջերն ու վարչական եռանդով օժտվածները դառնում էին տեղային կատարյալ եւ հզոր իշխաններ... Քաջ, խելքով եւ վարչական ընդունակություններով օժտված մելիքները մեծ ազդեցություն եւ հեղինակություն էին ձեռք բերում նույնիսկ իրենց երկրի սահմաններից դուրս: Կային այնպիսիները, որոնք անձամբ հայտնի էին շահերին եւ ստանում էին նրանցից հանձնարարություններ ամենակարեւոր գործերի վերաբերմամբ»[112]: Այնուհետեւ Լեոն նկատում է. «...շահական հրովարտակներով այսպես էր պատկերանում մելիքների անձնավորության մեջ կենտրոնացած հայ ազգային իշխանությունը. մելիքը տեր էր, տիրապետող, այն էլ ինքնագլուխ ու միահեծան, ոչ ոք իրավունք չուներ ընկերանալ նրա իշխանությանը: Ամենքը պիտի հնազանդվեին մելիքին, կատարեին նրա հրամանները, որովհետեւ մելիքը բարձր իշխանության կողմից նշանակված իշխանավոր էր: Իր հերթին մելիքը պարտավոր էր լինել արդարադատ, պիտի հոգ տաներ իր երկրի բարօրության մասին, որպեսզի բնակիչները, ապրելով խաղաղության եւ անդորրության մեջ, օրհնեին պարսից բարձրագույն իշխանությունը»[112]:

108 Անդ, էջ 203:
109 Տե՛ս **Լեոնիկ Մկրտումյան,** նշվ. աշխ., էջ 152:
110 Տե՛ս անդ, էջ 156:
111 Տե՛ս **Բագրատ Ուլուբաբյան,** Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, Երեւան, 1994, էջ 131:
112 Անդ, էջ 18: